

Արձանագրություն թիվ 7

ԵՊՀ-ի Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,

կայացած 2023թ փետրվարի 21-ին

Օրակարգը՝

1. Քննաշրջանի արդյունքների հաստատում:
2. Մագիստրոսական ծրագրերով ուսուցման վիճակի մասին ամբիոնների վարիչների հաղորդումների լսում:
3. Մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքները:
4. Ընթացիկ հարցեր:

Գիտական խորհրդի նախագահ, պրոֆեսոր Ս.Վ.Ղոչիկյան – Հարգելի գործընկերներ գիտխորհրդի 16 անդամներից ներկա են 14 –ը, քվորում ունենք հետևաբար կարող ենք անցնել մեր աշխատանքին: Օրակարգին բոլորը ծանոթ եք. առաջարկություններ կամ փոփոխություններ օրակարգում ունե՞ք: Գիտխորհրդի վերոհիշյալ աշխատանքային օրակարգն ընդունվեց միաձայն:

1. Նիստի նախագահ, պրոֆեսոր Ս. Վ. Ղոչիկյան – Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ: Առաջին լուծարքից հետո քիմիայի ֆակուլտետի քիմիա բաժնի բակալավրիատում ունենք անբավարար ունեցող 13 ուսանող: Մենքի անվտանգության բաժնում ունենք 7 անբավարար ունեցող ուսանող: Այս տվյալները հուսադրող ըեն, եթե հաշվի առնենք մեր ուսանողների քանակը՝ ուղիղ 20%: Ինչ են մտածում ծրագրերի ղեկավարները: Բակալավրիատի ծրագրի ղեկավար Լ. Գաբրիելյան – Աշխատանքներ են տարվում անբավարար ստած ուսանողների հետ: Հիմնական առարկաները՝ ֆիզիկա և մաթեմատիկա: Հուսով եմ հաջորդ լուծարքին կստանան:

2. Պրոֆեսոր Ս. Վ. Ղոչիկյան – Մի անգամից անցնենք օրակարգի 3-րդ հարցին, որը վերաբերվում է մագիստրոսական թեզերի պաշտպանության հարցին: Մագիստրոսները բակալանին լավ պատրաստված էին՝ և քիմիա և Մենքի անվտանգություն և ծրագրի: Պետք է այդ սանդղակը պահել՝ հնարավորության դեպքում ավելի բարձրացնել:

3. Տ. Վ. Ղոչիկյան - Ֆակուլտետում գործում են երկու մագիստրոսական ծրագրեր՝ 1, Սննդի անվտանգություն մագիստրոսական ծրագիրը և նյութագիտություն ծրագիրը: Նյութագիտություն ծրագիրը երկու տարով է, ծրագրի դեկլարան է Ա. Ս. Գալստյանը

Ա. Ս. Գալստյան - նյութագիտություն մագիստրոսական ծրագիրը երկամյա ծրագիր է: Ընդունվել էին 5 ուսանող, որոնցից մեկը դուրս եկավ իր դիմումի համաձայն: Դասերը ընթանում են նորմալ հունով:

Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ Ա. Ի. Մարտիրոսյան – Սննդի անվտանգություն ծրագրով սովորում են 8 ուսանող: Հարցը նրանց հաճախումներն են, քանի որ աշխատավարերում չեն կարողանում կարգավորել: Դա ժամանակի հարց է, որը կլուծվի:

Քիմիայի ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Տ. Վ. Ղոչիկյան

Ընթացիկ հարցերունենք երկու հարց

1, ԵՊՀ գիտական խորհրդի կազմը լուծարվել է և նոր կազմի ձևավորման համար մեր ֆակուլտետից պետք է առաջարկեք 1 թեկնածու: Առաջադրվեց Ն. Ա. Դուրգարյանի թեկնածությունը: (Այլ առաջարկներ չեն դրան):

Քիմիայի ֆակուլտետի գիտխորհրդի 16-անդամներից ներկա էին 14-ը: Կազմվեց հաշվիչ հանձնաժողով փակ քվեարկության համար՝

նախագահ պրոֆ. Հ. Գ. Խաչատրյան անդամներ՝ դոցենտ Ռ. Պ. Մխիթարյան և ուսանող Ա. Հարությունյան

Քվեարկությանը մասնակցել են ֆակուլտետի գիտական խորհրդի 14 անդամներ:

Բաժանվել է 14 քվեաթերթիկ:

Քվեատուփում առկա է 14 քվեաթերթիկ:

Քվեարկության արդյունքներն են՝

Դուրգարյան Նարինե Անժելոյի կողմ 11, դեմ 2, ձեռնպահ 1,

Անվավեր քվեաթերթիկների քանակը 0:

Փակ (գաղտնի) քվեարկություն արդյունքներով Նարինե  
Դուրգարյանը ընտրվել

Է Քիմիայի ֆակուլտետից ԵՊՀ գիտական խորհրդի անդամ:

Որոշեցին ԵՊՀ Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ հաստատեց հաշվիչ հանձնաժողովի արդյունքները:

2. Հաջորդ ընթացիկ հարցը՝ ասպիրանտ Վ. Սարգսյանի գիտական ղեկավարի հաստատման հարցն է:

Այս տարվա սեպտեմբերի ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի օրգանական քիմիայի ամբիոնի ասպիրանտ է ընդունվել Վարդան Աշոտի Սարգսյանը: Նա մեզ մոտ է տեղափոխվել ԵՊՀՏՀ-ից: Թեման հայտնի և մեզ մնում է միայն ղեկավարի հաստատման հարցը: Ղեկավարը քիմ.գիտ.թեկնածու, դոցենտ Արամ Միքայելյանն է, ով ունի ԲՈԿ-ից համապատասխան մասնագիտական թվանշանով Ե. 17. 04 ասպիրանտ ղեկավարելու թույլ տվություն:

Որոշեցին բաց քվեարկությամբ առաջարկել Վ. Սարգսյանի թեկնածուական ատենախոսության ղեկավար ք.գ.թ, դոցենտ Ա. Միքայելյանին, իսկ ատենախոսության վերնագիրը՝ Տերպենների հիման վրանորկեն սակտիվ միացությունների ստացման անթափոն տեխնոլոգիայի մշակում:

Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը քվեարկության 1 դեմ, 4 ձեռնպահ, 9 կողմ քվեով հաստատեց Վ. Սարգսյանի թեկնածուական ատենախոսության վերնագիրը՝ Տերպենների հիման վրանորկեն սակտիվ միացությունների ստացման անթափոն տեխնոլոգիայի մշակում, և ղեկավար ք.գ.թ, դոցենտ Ա. Միքայելյանի թեկնածությունը:

Գիտական խորհրդի նախագահ,

պրոֆեսոր

Տ.Վ.Ղուչիկյան

Գիտ.քարտուղար, դոցենտ

Մ.Ա.Սամվելյան

